

Ա. Մ. ՄՆԱԳԱԿԱՆՅԱՆ

ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

1

Թոնդրակյան շարժումը հայ աշխատավորության անցյալ կյանքի ամենապայծառ էջերից մեկն է: Չնայած մինչև օրս շատ է խոսվել այդ շարժման մասին, բայց դեռևս գոյություն չունի այն հանգամանորեն ներկայացնող ոչ մի ուսումնասիրություն: Այս երևույթի պատճառը մասամբ պատմական վկայությունների սակավությունն է, մասամբ՝ մեր պատմաբանների կողմից եղած փաստերի ոչ պատշաճ ուսումնասիրումը:

Ինչպես հայտնի է, Թոնդրակյան շարժումն առայժմ փաստարկված է որպես միայն գյուղական աշխատավորության սոցիալական պայքարը գլխավորող շարժում: Պարզվում է, որ Թոնդրակեցիները գլխավորել են նաև քաղաքային ճնշված մասսաների դասակարգային պայքարը: Բացի դրանից, մինչև օրս Թոնդրակյան շարժումը դիտված է որպես սոցիալական շարժում՝ ուղղված միայն ներքին տերերի դեմ: Պարզվում է, որ այն ծավալված է եղել նաև երկրի արտաքին թշնամիների և նրանց գործակալների դեմ: Ահա թե որքան համաժողովրդական շարժում է եղել այն: Այս բոլորից պարզ է նաև Թոնդրակյան շարժման առաջնորդների գաղափարախոսության, նրանց աշխարհայացքի և այլ նման հարցերի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Մենք այստեղ կսահմանափակվենք միայն առաջին խմբի հարցերի ուսումնասիրությամբ, օգտագործելով հատկապես Գրիգոր Մագիստրոսի նամակները, որոնք հրատարակված են վաղուց և ուսումնասիրված՝ դեռևս շատ անբավարար կերպով: Չպիտի մոռանալ, որ այդ նամակները եղել են իր ժամանակի քաղաքական ամենաոռակցի գործիչներից մեկի անձնական արխիվի մնացուկները և պարունակում են շատ գաղտնի գրություններ: Դրանց հատկապես մի մասը, որպես այդպիսին, մեծ նշանակություն ունի պատմագիտության համար:

Թոնդրակյան շարժման մասին եղած վկայություններից արդեն կատարված են կարևոր եղրակացություններ՝ այդ շարժման սոցիալական բովանդակության մասին: Սովետական պատմաբաններն ու գրականագետները, հաճախ անդրադառնալով այդ հարցին, ցույց են տվել, թե ինչպես X—XI դարերում, շուրջ երկու հարյուր տարի տևող այդ շարժումը ոտքի է հանել հայ գյուղացիական մասսաներին՝ ընդդեմ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների: Պարզված է, թե ինչպես նրանք դեմ էին և՛ եկեղեցուն, և՛ նրա շուրջը համախմբված հուկորականության պորտաբույժ բանակին: Նրանք չէին ընդունում քրիստոնեական եկեղեցու դոգմաներն ու նրանց վրա հիմնված զանազան արարողությունները, համարելով դրանք ժողովրդին խաբելու միջոցներ:

Հենց այստեղից ինքնին հասկանալի է, որ այդպիսի շարժումը չէր կարող սահմանազատվել, ընդգրկելով լոկ գյուղացիական խավերին: Դա իր ընդհանուր բնույթով չէր կարող չկապվել նաև քաղաքային աշխատավորության հետ, որն այն ժամանակ Հայաստանում հսկայական թիվ էր կազմում և գտնվում

էր դարձյալ ծայրահեղ վատթար պայմաններում: Բացի դրանից, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներն ապրում էին ոչ միայն գյուղերում, այլև քաղաքներում: Բավական է հիշել, թե ինչպես թագավորն ու կաթողիկոսը, ֆեոդալիզմի այդ երկու հիմքերը, գտնվում էին Անիում, իսկ նրանց և նրանց զինակիցների կալվածքները սփռված էին երկրով մեկ: Նրանց կալվածքներում ծագած ապստամբությունները, ըստ էության, ամենից առաջ, նրանց դեմ էին ուղղված: Եվ բնական է, որ նման խռովություններ պիտի նախապատրաստվեին ու բռնկվեին նաև Անիում ու մյուս քաղաքներում: Բացի դրանից, ովքե՞ր էին այդ ժամանակվա քաղաքացիները, եթե ոչ երեկվա ճորտ գյուղացիները, որոնք դեռ սերտորեն կապված էին գյուղերի հետ՝ ի դեմս այնտեղ հեծող իրենց հարազատների: Իսկ եթե այս բոլորին ավելացնենք նաև քաղաքային աշխատավորության անլուր շահագործումը, ապա պատկերն ավելի պարզ կլինի:

Թե ինչ աստիճանի է հասած եղել քաղաքային աշխատավորության շահագործումն ու թալանը, բավական է հիշել ժամանակակից պատմիչ Արիստակես Լաստիվերտցու հետևյալ տողերը.

«Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ օտարաց, ե ի քրտանց տնանկաց փարթամանան, և ի վաշխից և յանխաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն. և ինքեանք զմիտս իւրեանց անողորմ ունելով առ աղքատս և տնանկս՝ միայն հեշտութեան և փափկութեան սպասեն, և ի գործոց աղտեղութեան ո՛չ խորշին»¹:

Եթե կղերականության ներկայացուցիչը, իր դասակարգային շահերից ելնելով, օգտագործում է քաղաքային աշխատավորության անողորմ կեղեքումը՝ որպես բողոք, ապա ինքնին հասկանալի է, որ այդ բողոքն ավելի առողջ ձևով և ավելի սուր բնույթով, ամենից առաջ, պիտի բարձրացած լիներ քաղաքային շահագործվող մասսաների կողմից: Եվ, որովհետև Անին իր ժամանակի ամենազարգացած քաղաքն էր Հայաստանում, ապա հենց Անիումն էլ պիտի այդ երևույթն ամենաուժեղ արձագանքն ունենար:

Ասողիկը վկայում է, որ Սմբատ առաջինի մահից մի քանի տարի առաջ, այն է՝ 980-ական թվականներին, Անիում տեղի է ունենում մի ուշագրավ դեպք: Անհայտ մարդիկ հրկիզում են թագավորի շկալսած հացահատիկի և խոտի հսկայական դեզերը, որոնք կուտակված էին բազմաթիվ տարիների ընթացքում.

«էր նորա համբարանոց խոտի և օրանի ի քաղաքն Անույ, ի բազում ամաց կուտեալ. և լուցին զնա հրով»²:

Պարզ է, որ այդ գործը կազմակերպված է եղել զրկվածների կողմից, որոնք, սովահարության մատնված լինելով, շեն կարողացել հանդուրժել թագավորի դիզած հատկապես հացահատիկի փտելու և շօտագործվելու երևույթը.

Դա երևում է նաև նույն պատմիչի այդ կապակցությամբ նկարագրած մի ուրիշ դեպքից: Եկեղեցում աղոթողներից մեկը, ասում է նա, խելագար լինելով, վերցնում է կրակ, որ դուրս տանի: Ո՞ւր ես տանում. հարցնում են նրան. նա պատասխանում է, թե գնում եմ թագավորի համբարանոցը հրկիզելու: Լուրը հասնում է թագավորին, որի հրամանով այդ խելագարի աչքերը հանում են, իսկ մարմինը հրկիզում: Հրկիզված դիակը շարտվում է քաղաքի պարիսպներից դուրս: Որոշ կրոնավորներ թաղում են այդ դիակը, իսկ թաղավորը նորից է

¹ Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերտցու, Թիֆլիս, 1912, էջ 167:
² Սեբևանցոսի Ասողկայ, Պատմութիւն տիեզերական, Փարիզ, 1859, էջ 245:

հրամայում այն դուրս հանել հողից: Այդ պատճառով էլ նշված կրոնավորները սգում են և անիծում թագավորին¹:

Անիում տիրող սոցիալական դաժան անարդարությունների մասին է խոսում, օրինակ, նաև ժողովրդական մի անտիպ հայրեն, որի մեջ նկարագրվում է, թե ինչպես Անիի սուրբ Նշան կոչվող եկեղեցու բակը վեր է ածված եղել երեխաների վաճառանոցի.

«... Քո ձագն ի Անի տեսայ,
 Բ Անի ու սուրբ Նշանի.
 Քո ձագդ ի ծախողին գրկին
 Կու նայեր ի դէմ գնողին.
 — Ծախեցէք ու մի վախէք,
 Վայ հազար իմ կոսրնօղին...»²:

Ահա Անիի պատկերն ունալիստորեն նկարագրող մի հատված, որտեղ իրար դեմ են կանգնած մի կողմից՝ վաճառվող երեխաները, իսկ մյուս կողմից՝ նրանց առևտրով զբաղվողները: Այս անարդար կարգերի դեմ աշխատավորության ունեցած անհուն բողոքը ցայտուն կերպով դրսևորված է այդ երգի այն մասում, որտեղ վաճառվող երեխայի մայրը տիրող կարգերի սիմվոլիկ հովանավորին՝ հրեշտակին ասելու թյամբ ասում է.

«Հայ, գնա իմ ծուռ գատաւոր...»:

Այստեղ էլ, ինչպես Ֆրիկի մոտ, սոցիալական պայթյալն իր սուր սլաքով ուղղված է եկեղեցու և ֆեոդալիզմի դեմ: Եվ պատահական չէ, որ թոնդրակեցիների շարժումն իր ամենադաժան հաշվեհարդարն էր տեսնում նաև եկեղեցու և նրա գործիչների հետ: Եկեղեցին ոչ միայն հովանավորում էր գյուղի ու քաղաքի շահագործող դասակարգերին, այլև ինքն էլ ետ չէր մնում նրանցից: Մասնագետներն այս երևույթը ցույց տալու ժամանակ, սովորաբար, հիշում են ժամանակի Պետրոս կաթողիկոսին, որն, ըստ Մատթեոս Ուռհայեցու, «ունէր կազմութիւն հայրենեաց՝ տուեալ ի թագաւորացն Հայոց՝ հինգ հարիւր գեղ անուանի և մեծանիստ և շահաւէտ ընտիր ընտիր, նույնպէս և եպիսկոպոսս հինգ հարիւր փառաւոր և գաւառապետս ի վերայ եօթն հարիւր թիմի. հանապաղ երկոտասան եպիսկոպոս և շորս վարդապետ ի տանն հայրապետին և վաթսուն երէց ի կրօնաւորաց՝ և յաշխարհականաց՝ հինգ հարիւր: Եւ չէր նուաստ աթոռ հայրապետութեանն քան զթագաւորութեանն Հայոց: Նաև զարդարանք եկեղեցեացն և տանն հայրապետութեանն բազում և անհամար և հրաշալի մեծությամբ լցեալ»³:

Իսկ թե ինչպիսի հարստություն են ունեցել գավառատեսուչները, դա երեվում է նույն հեղինակի հետևյալ վկայությունից՝ Արծն քաղաքի Դավթուկ քորեպիսկոպոսի մասին. «Բայց զայս բազում անգամ լուեալ է մեր ի բազմաց

¹ Սեփանցուսի Ասողկայ, Պատմութիւն տիեզերական, Փարիզ, 1895, էջ 245—246: Այդպիսի դեպքերն այն ժամանակ և հետո պիտի շատ տարածված լինեին, որպեսզի Մխիթար Գոշը իր Դատաստանագրքում հատուկ օրենքով արգելի դիտավորյալ կերպով կազմակերպված հրկիզումները:

² Ձեռագիր № 697, թերթ 59ր—59ա:

³ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 153—154:

աղագս քորեպիսկոպոսին, որ ասէին Դաւթուկ, եթէ զգանձատունն նորա Ար-
րիհիմն էառ ե քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորա. ութ հարիւր վեցկի
եղանց ելանէին ի տանէ նորա»¹:

Այս փաստերը ցույց են տալիս, որ Պետրոս կաթողիկոսի օրոք թոնդրակ-
յան շարժումը որպէս ի՛ գյուղի, ի՛ քաղաքի ճնշված դասակարգերի սոցիա-
լական բողոքի արտահայտութիւն, ամենից առաջ, պիտի ուղղված լիներ նաև
հենց Պետրոս կաթողիկոսի դեմ:

Նա թոնդրակեցիների ամենամեծ թշնամին էր նաև այն տեսակետից, որ
ինքն էր հովանավորում եկեղեցական բոլոր գործերը: Նա էր եկեղեցու գլխավոր
ղեկավարը: Եկեղեցի, որ իր ճիրանների մեջ էր առել գյուղական և քաղաքա-
յին աշխատավորներին, ու սրբացնում էր նրանց անլուր կեղեքումը՝ աշխարհիկ
ու հոգևոր ֆեոդալների կողմից:

Պետրոս կաթողիկոսը արժանի էր ի՛ գյուղի, ի՛ քաղաքի աշխատավորու-
թյան դառն ատելութեանը նաև մի ուրիշ պատճառով: Այստեղ նկատի ունենք
նրա և նրա կուսակիցների այն քայքայիչ աշխատանքը, որն ի վերջո գլուխ
բերեց երկիրը բյուզանդական բռնակալներին վաճառելու գործը: Ժողովրդից
զաղտնի շէր մնացել 1022—1045 թվականների ընթացքում Պետրոս կաթողի-
կոսի հունամուլ աշխատանքների մի զգալի մասը. հանրահայտ էին Տրապիզոնի
ղաշինքը, որի պարագլուխն էր ինքը, տեր Պետրոսը, նրա 1022—1029 թվական-
ներին բյուզանդական տերիտորիայում ապրելը, 1037 թվականին ծածուկ կեր-
պով Չորո վանք դնալը և այլն:

Թոնդրակեցիները, որպէս հայրենի երկրի և հայ աշխատավորութեան շա-
հերն ամեն ինչից վեր դասող մարտիկներ, ժողովրդի հարազատ զավակներ,
չէին կարող անտարբեր մնալ վաճառքի այդ ստոր հաշիվների հանդեպ: Ինչ-
պէս երևում է, նրանք հենց ճիշտ ժամանակին էլ ձեռնամուխ են եղել Պետրոս
կաթողիկոսի և նրա կուսակիցների հետ հաշիվի նստելու գործին:

2

Թոնդրակեցիների շարժմանը նվիրված ուսումնասիրութիւնների մեջ դեռևս
չկա որևէ ակնարկ այն մասին, որ այդ շարժումը մուտք էր գործել նաև Անի,
մինչդեռ այդ մասին Գր. Մազիստրոսի նամակներում կան մի քանի պերճախոս
վկայութիւններ, որոնք, հիմնականում, վրիպել են մասնագետների ուշադրու-
թյունից, իսկ մասամբ էլ՝ ստացել են ոչ ճիշտ մեկնարանութիւն: Այստեղ,
ամենից առաջ, նկատի ունենք երկու նամակ. մեկն ուղղված է Պետրոս կաթո-
ղիկոսին, իսկ մյուսը՝ նրա սարկավազներից մեկին: Այդ երկու նամակն էլ շա-
րագրված են նույն հարցի կապակցութեամբ: Առաջին նամակի խորագիրն է
«Առ տէր Պետրոս ի ժամանակի խուժան յառնելոյ ի Բաղաբին և վերայ նորա.
բան մխիբարական...»², իսկ երկրորդինը՝ «Առ ոմն սարկուազ Եւեան Պետրոսի
ի ժամանակի խազմի խուժանին ի վերայ յարուցեալ»³: Պարզ է, որ «քաղա-
քում», այսինքն՝ Անիում տեղի է ունեցել ժողովրդական մի ապստամբութիւն՝
ուղղված Պետրոս կաթողիկոսի դեմ, որի մասին Գր. Մազիստրոսին նամակներ

¹ Մասրևոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 103:

² Գ. Կոստանյան, Գրիգոր Մազիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 4:

³ Նույն տեղում, էջ 34:

են գրել և՛ Պետրոս կաթողիկոսը, և՛ նրա սարկավազներից մեկը, որոնց պատասխանել է՝ Իր. Մագիստրոսը՝ մեղ հասած այդ նամակներով:

Արդ, ի՞նչ ապստամբություն է եղել դա: Մասնագետները մինչև օրս, նկատի առնելով միայն առաջին նամակը, թյուրիմացաբար, եզրակացրել են, թե այդ ապստամբությունը տեղի է ունեցել 1045 թվականին՝ երկիրը բյուզանդական իշխանությունը վաճառելու հողի վրա: Օրինակ, Լեոն, խոսելով Պետրոս կաթողիկոսի դավաճանության և Անիի բանալիների հանձնման մասին, գրում է. «Մենք հիմք ունենք ասելու, որ ժողովուրդը շրավականացավ միայն լացով, այլ իր բուռն դայրույթն արտահայտեց՝ Պետրոս կաթողիկոսի վրա հարձակվելով: Այսպես ասել է տալիս Գր. Մագիստրոսի նամակներից մեկը, որ մխիթարական խոսքեր է պարունակում այն առիթով, որ քաղաքի (անկասկած, Անիի) խուժանը հարձակվել էր նրա վրա: Այսպիսի մի ժողովրդական ցասում կարող էր տեղի ունենալ միայն համայնական սղի և լքման այս օրերին»¹:

Անշուշտ, նման հուզում կարող էր տեղի ունենալ նաև Անին դավաճանորեն թշնամուն հանձնելու օրերին, սակայն, տվյալ նամակը, ինչպես և մյուսը, որի վրա ուշադրություն չի դարձրել Լեոն, գրված են այդ դեպքից առաջ և կապ ունեն թոնդրակյան շարժման հետ: Այդ մասին որոշակի տվյալներ կան հենց այդ նամակների մեջ: Օրինակ, Պետրոս կաթողիկոսի սարկավազին գրված վերոհիշյալ պատասխանի մեջ Գր. Մագիստրոսը հայտնում է նրան, որ նրա նամակն ինքն ստացել է և գոհ է, որ նա կենդանի է մնացել («կենդանութեան լինելոյդ»): Ապա նա կրոնա-քարոյական մի ամբողջ քարոզ է կարդում, պահանջելով միշտ, համբերատար կերպով, հանուն Քրիստոսի, ենթարկվել «փորձութեանցն մարմնական, որ ի մականդաւորացն հարաւային», որովհետև կյանքն առանց աստվածային պաշտամունքի «սնոտի» է: Այստեղ պարզ երևում է, որ ժողովրդի ապստամբությունն ուղղված է եղել հատկապես քրիստոնեական հավատքի և եկեղեցու դեմ, որն ինքնին ակնարկում է թոնդրակյան շարժման առկայությունը: Այնուհետև Գր. Մագիստրոսն ավելի որոշակի կերպով է խոսում այդ մասին՝ «խազմի» ելած «խուժանին» նկարագրելիս. «Կամիմ եթէ սուղ ինչ գրեցից առ քեզ յաղագս աղէտի քակման, և երկնային երանելի կրօնից մերոց ներհակք շար յուզեցեալ յանօրէն և ի շար կիւսոյ Մանինեցւոցն և յայոց բազմաց աղանդոց խրթնացեալ և նսեմացեալ միգապատ կուրութեամբ աշխարհս այս: Զվսամական սրբազնութեան յուսափայլութեան ճրագն շիջուցանել կամ գրէ եթէ ակն տունջեան ի սոսա երբէք ոչ ծագեալ, զոր ոչ ժամանեմք այժմ գրել»: Այնուհետև, նուրբ ակնարկով, Գր. Մագիստրոսը հուսադրում է այդ սարկավազին մոտալուտ փրկութեան հույսով. «յուսամք առ աստուած, զի փրկեսցէ զմեզ հանդերձ մերով զարմիւ յայսպիսի դիւական և մոլեգնեալ հաղբից և խմորեալ դանդուածոյ Սաղուկեցւոցն անհաւատութենէ»²:

Ճիշտ է, Գր. Մագիստրոսը ուղղակիորեն չի նշում, որ իր խոսքը թոնդրակեցիների մասին է, բայց եղած ցուցումն էլ միանգամայն բավական է այդտեղ տեսնելու թոնդրակեցիներին: Թոնդրակեցի կոչումը հետագայում է զարգացել, որպես ընդհանուր կոչում այդ շարժման: Սկզբնական շրջանում, ինչպես նաև Գր. Մագիստրոսի ժամանակ, թոնդրակեցիներին կոչում էին և՛ թոնդրակեցիներ, և՛ մանիքեցիներ, և՛ պավլիկյաններ, և՛ սաղուկեցիներ, և՛ ընդ-

¹ Լեո, Հայոց պատմություն, II, Երևան, 1947, էջ 704:

² Կ. Կոստանյան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 36:

հանրապես աղանդավորներ, կախարհներ, հմայողներ և այլն: Ահա այդպես է վարվել Գր. Մազիստրոսը նաև այստեղ: Որ իրոք նա ի դեմս «յանօրէն և ի շար կիւսոյ Մանինեցւոցն և յայլոց բազմաց աղանդոց» նկատի ունի այն շարժման մասնակիցներին, որոնց այսօր կոչում ենք մի ընդհանուր՝ թոնդրակեցիներ անունով, դա կարելի է ցույց տալ հենց Գր. Մազիստրոսի մի շարք ուրիշ նամակների միջոցով: Այսպես, օրինակ, նրա մի նամակում, որն ուղղված է դարձյալ դեպի Անի՝ Սարգիս վարդապետին, կարդում ենք. «ասա՛ ինձ, ով սիրելի, զՄանիքեցւոցն որոյ Թոնդրակեցեացն, որ աւելի քան զերկերիւր ամ ապականեալ զաշխարհս ամենայն»¹: Այստեղ էլ ինչպես մեզ հետաքրքրող նամակում մանիքեցիներն ու թոնդրակեցիները նույնացված են: Բերենք մի ուրիշ վկայութիւն: Գր. Մազիստրոսի նամակներից մեկի խորագիրն է. «Յադագս նկարագրութեան սրբոյ եկեղեցւոյն սրահի գաւթի գրեաց զայսոսիկ և սակս Մանիքեցւոց»²: Չնայած այստեղ խոսքը վերաբերում է «Մանիքեցիներին», բայց նամակից երևում է, որ նա նկատի ունի թոնդրակեցիներին: Նա ինքն էլ այդ մասին հենց նույն նամակում կատարել է համապատասխան բացատրութիւն. «Եւ այսոքիկ բնաւին որոշելոցն յաստուծոյ և յուսոյ յարութեանն ոչ ունողացն, որք ի Մանիքեցւոցն ուսեալք անունելոցն Թոնդրակեցիք»³: Ասորոց կաթողիկոսին գրված պատասխանի մեջ ևս Գր. Մազիստրոսը նույն առումով է գործածում այդ կոչումները. «Պատասխանի քղբոյն կաթողիկոսին Ասորոց ի ժամանակին, յորժամ էր դուքս ի Վասպուրական և ի Տարօն. զկնի բառնալոյն զՄանիքեցիսն յաշխարհէն Յունաց և ի Թոնդրկաց. մնացեալսն նոցա կործանեալ ազգն չոգան առ կաթողիկոսն Ասորոց ի քաղաքն Ամիր...»⁴:

Ահա ևս մի օրինակ, ուր խոսքը վերաբերում է վերևում նշված «մնացեալս»-ին. «Պատասխանի քղբոյն Թուլայեցեաց, մնացելոցն ի նորոց Մանիքեցւոց Թոնդրակեցեացն...»⁵:

Ինչպես տեսնում ենք, բոլոր հիմքերը կան՝ մեզ հետաքրքրող նամակում նշված «մանիքեցիներին» ընդունել թոնդրակեցիների տեղ, մանավանդ, որ այդ ժամանակ մանիքեցիներն այլևս չկային:

Այդ նամակում կա մի ուրիշ մոմենտ ևս. խոսքը վերաբերում է քննվող ապստամբութիւնը բարձրացնողներին կախարդ-հմայողներ համարելուն և նրանց մեջ «բազում» աղանդներ տեսնելուն: Որ այն ժամանակ թոնդրակեցիներին նաև այդպես էին կոչում, այդ մասին ևս հենց իրեն, Գր. Մազիստրոսի մոտ կան հարուստ վկայութիւններ: Նա իր նամակներից մեկում, խոսելով թոնդրակեցիների առաջնորդ և հիմնադիր Սմբատ Զարեհավանեցու մասին, ցույց է տալիս, թե ինչպես նա ի մի էր համախմբել բոլոր աղանդները. «Այսպէս ոչ եթէ հերձուած դոցա միոյ պատճառի է կամ երկուց կամ երից, այլ յամենայն շարափառացն ի կիւսոյ, ի դիւթիւթենէ, ի հմայից, ի կախարդութեանց, յանհաւատութեանց, յամենեցունց զթոյնս շարութեան ի մի վայր ժողովեալ հերձուածս, հաւանեցան այնմ աստուածամարտ և ցանկապատառ դիւամոլի տնօրինին Սմբատայ օրէնս դնել...»⁶:

¹ Կ. Կոստանյան, Գրիգոր Մազիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 65:

² Նույն տեղում, էջ 168:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 148:

⁵ Նույն տեղում, էջ 164:

⁶ Նույն տեղում, էջ 160:

Նման ուրիշ վկայություններ էլ կան, որոնց վրա չենք ծանրանում:

Քննվող նամակում ապստամբները կոչված են նաև բիրտիական սադուկեցիներ տերմինով: Որ տվյալ դեպքում թե՛ մանիքեցիներ, թե՛ աղանդավորներ և թե՛ սադուկեցիներ կոչումները նույնիմաստ ուժ ունեն, դա ինքնին հասկանալի է: Քանի որ առաջին երկու կոչումները համազոր են եղել թոնդրակեցիներ կոչմանը, բնականաբար նույնը կարելի է ասել նաև երրորդի (սադուկեցիներ) մասին: Այս կարծիքն էլ կարելի է փաստարկել հենց իր՝ Գր. Մագիստրոսի վկայություններով: Օրինակ, նա դրում է. «Հանդիպեցայ ատրուշանին Թոնդրակաց, յորում թաղեալ կայր խմորն Սադուկեցուց և բորբոքէր թաղեալ անթեղն շարութեան»¹: Այդ նույն նամակում, որն ամբողջապես ուղղված է թոնդրակեցիների դեմ, կան նաև նման ուրիշ տողեր. «Զոր զգուշացուցանեմք զքոյդ սրբազնութիւն զգուշանալ ի խմորոյ Սադուկեցուց»²: Այստեղ արդեն սադուկեցի բառը, բոլորովին առանձին, գործ է ածված թոնդրակեցիներ բառի փոխարեն: Նա նույնպես է վարվում նաև թոնդրակեցիներին ուղղված նամակի մեջ, տենչալով ազատվել նրանց «զաղտնի նետից և ի Սադուկեցի խմորոց»³:

Այս բոլորը լրիվ կերպով հիմք են տալիս համոզվելու, որ քննվող նամակում խոսքը վերաբերում է միայն և միայն թոնդրակեցիներին:

Քննված հարցերը հիմք են տալիս մի ուրիշ, դարձյալ կարևոր նշանակություն ունեցող եզրակացության: Ինչպես Գր. Մագիստրոսը, այնպես էլ ուրիշ հեղինակներ, ինչպես ասվեց, հաճախ, խոսելով թոնդրակյան շարժման մասին, նրանց փոխանակ անվանելու թոնդրակեցիներ, անվանում են մանիքեցիներ, պավլիկյաններ, սադուկեցիներ, շարափառ կախարդներ, հմայողներ, աղանդավորներ և այլն: Իսկ այդպիսի վկայությունները շատ-շատ են: Ուստի, այսպիսով, հնարավոր է դառնում թոնդրակյան շարժման ժամանակաշրջանին վերաբերող աղբյուրներում գտնել սպասածից շատ վկայություններ թոնդրակեցիների մասին: Հենց Գր. Մագիստրոսի մոտ ևս նման վկայությունները շատ են: Այդ մասին համապատասխան փաստեր կտեսնենք ստորև⁴:

Ահա այս բոլորը նկատի առնելով կարող ենք համոզված կերպով ասել, որ Գր. Մագիստրոսի նամակներում նշված և Անիում Պետրոս կաթողիկոսի դեմ տեղի ունեցած ապստամբությունը եղել է թոնդրակյան շարժման փայլուն դրվագներից մեկը⁵:

Նույն եզրակացությանն ենք գալիս նաև Պետրոս կաթողիկոսին գրված պատասխանից⁶: Գր. Մագիստրոսն այստեղ, նկատի ունենալով նրա գլխին պայթած փոթորիկը, նրան համեմատում է հանուն քրիստոնեական գաղափարների մաքառած սրբերի, մարտիրոսների հետ: Այդ և նման ապստամբությունների պատճառն, ըստ նրա, «տգիտութիւնն» է, որի պատճառով էլ մարդիկ չեն

¹ Կ. Կոստանյան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 158:

² Նույն տեղում, էջ 162:

³ Նույն տեղում, էջ 166:

⁴ Այս հարցում պիտի գգույշ լինել, որովհետև խոսքը վերաբերում է ոչ բոլոր նման վկայություններին:

⁵ Անգամ քննվող նամակից մեջ բերված վերջին պարբերությունն էլ բավական կլինի այդպիսի եզրակացության դալու: Այդտեղ Գր. Մագիստրոսը նշում է, որ այդ շարժումն ընդգրկած է եղել «զաշխարհս ամենայն»: Պարզ է, որ անեցիների հետ խոսելիս Գր. Մագիստրոսն այդտեղ, առաջին հերթին, պիտի նկատի ունենար նաև Անին, առաջնորդի նա չէր կարող խոսել ամբողջ Հայաստանի մասին:

⁶ Կ. Կոստանյան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 4—10:

հետևում աստվածային օրենքներին: Նմանները շատ են եղել սկսած դեռ հին ժամանակներից, ասում է Գր. Մագիստրոսը, և որպես օրինակ հիշում նրանց, «Որք Մովսէսի այնքանեացն արուեստից և յաստուածուստ երևման և պարգեաց ոչ անսացին, և զԱհարոն խոտորեցին, և մի ըստ միոջէ մինչև ցՅիսուս... որ մինչև ցայս վայր թշնամիք խաչին գտեալք յանդգնին»: Գր. Մագիստրոսը, հակաքրիստոնեական-հակակրոնական այդ պայքարը կապելով Անիում տեղի ունեցած ապստամբութեան հետ, ընդգծում է, որ դա առաջին դեպքը չէ. «Եւ զի՞նչ ինձ այսոքիկ. զի Արամեան անմտութիւն զայս ոչ միանգամ կամ երկիցս, բայց և բազում անգամ յամառեալք»: Բաղմաթիվ անգամ համառորեն կրկնվող այս ապստամբութեան մասնակիցների մասին այստեղ էլ Գր. Մագիստրոսը խոսում է այնպես, ինչպես ուրիշ թղթերում՝ թոնդրակեցիներին վարկաբեկելիս: Այդ մարդիկ, ասում է նա, ցավագնոտ են, որոնք—«ախորժալս մթերեալ յինքեան զհամաքամուածս և զտողս և զափոռդիտականս և զատիրազունականն և զմանիական մեղանպողականան կիզեալս, զի դժոխարոյժ ամենևին ելով բուժողացն»:

Ուշագրավ է, որ Գր. Մագիստրոսն իր ժամանակի քրիստոնեութեան թշնամիներին ավելի ուժեղ է համարում, քան Գրիգոր Լուսավորչի ժամանակ եղած հակառակորդներին, ուստի գրում է. «Թուի ինձ, եթէ ի խորագոյնս ոմանք այժմ անկանին խորխորատոս»: Դա մի անհիմն սպառնալիք չէր. այլ մի ակնարկ՝ կազմակերպվող միջոցառումների մասին: Նա նույն հիման վրա էլ պահանջում է, որ Պետրոս կաթողիկոսը շախրի, «քանզի յորժամ տկարանամք, յայնժամ զօրանամք»: Իրենց մոտալուտ հզորացումն ակնարկելով, Գր. Մագիստրոսն իր գաղափարական զինակցին ասում է. «Պարտ է աւագ աշօք շուրջ հայել և ժամանակի ծառայել»:

Այս բոլոր սպառնագին և ինքնավստահ ակնարկների հիմքում ընկած էին Պետրոս կաթողիկոսի, Գր. Մագիստրոսի և նրանց կուսակիցների այն ծրագրերը, որոնք աստիճանաբար նախապատրաստեցին 1045 թվականի աղետը:

Ինչպես տեսնում ենք, այս նամակում ոչ մի ակնարկ չկա 1045 թվականի դեպքերի մասին, այլ կան որոշակի վկայություններ Անիում, Պետրոս կաթողիկոսի դեմ բռնկված թոնդրակյան մի ապստամբութեան վերաբերյալ:

3

Գր. Մագիստրոսի այն խոստովանությունները, որոնց համաձայն թոնդրակեցիները երկու հարյուր տարուց ավելի ողողած են եղել ողջ երկիրը, և նրանց համառորեն մղած պայքարը բազմաթիվ անգամ վեր է ածվել հզոր ապստամբությունների, հիմք է տալիս կարծելու, որ վերևում քննված դեպքը թոնդրակյան շարժման առաջին կամ վերջին արտահայտությունը չէր՝ Անիում: Այդ մասին ևս կարևոր վկայություններ կան Գր. Մագիստրոսի նամակներում: Օրինակ, «Առ Տ. Պետրոս կաթողիկոս»¹ նամակում Գր. Մագիստրոսը նշում է, որ ինքն ստացել է նրա նամակը «սակս անիծելոյն այն նորոյ Կայէնի, և միւսոյ աշտարակաչինողի և սողոմայեցոյ»: Պարզ է, որ նրանք նկատի են ունեցել երկու անձնավորություն, որոնք եղել են իրենց գաղափարական հակառակորդները: Դրանցից առաջինի մասին Գր. Մագիստրոսը «Նոր Կայէն» դարձվածքից

¹ Կ. Կոստանյան. Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 26—31:

բացի, տալիս է նաև մի ուրիշ տեղեկություն, որի համաձայն նա «ոչ յաստուածային ամբիժ և անարատ Որդին Աստուծոյ համարձակէր բարբառել անպաշտ-շաճագոյն», այսինքն՝ նա չի համարձակվել Քրիստոսին սուտ աստված համարել: Հասկանալի է, որ նա շատ բան էլ համարձակորեն ժխտել է:

Ավելի ուշագրավ են տեղեկությունները երկրորդ անձնավորության մասին, որի անունը եղել է Ներսես: «Իսկ սա, — գրում է նրա մասին Գր. Մազիստրոսը, — ճշմարտութեանն հակամիտօղ և ուրացօղ Հոգւոյն Սրբոյ առաւել մերկանայր զբահանայական պատուոյն»: Այսինքն, իր հակաքրիստոնեական գաղափարներով այս անձնավորությունն ավելի քան խիզախ է եղել, որը «ոչ բաւական համարիւր խորթն և հովիշդ կաթողիկէ եկեղեցւոյ զիրն շարեաց ծառաիթիւն և զմոլութիւն ամահութեան դժնի իւրոյն անտեղի գործառնութեանն»: Այսինքն՝ նա չի սահմանափակվել իր պայքարը եկեղեցական գործերի ասպարեզում տարածելով, այլ, ինչպես երևում է, հասարակական-քաղաքական լայն գործեր էլ է ձեռնարկել: Գր. Մազիստրոսը հայհոյում է նրան, որովհետև նա ատելությամբ «յաստուած արկանէ զձեռն», իսկ նրա լեզուն «հրացեալ և մխեալ կայծակամբք կաղնեաց» (ճիշտ այդպես է բողոքում նաև Արիստակես Լաստիվերտցին Հրանուշ, Ախնի և Կամարա թոնդրակեցիների լեզվի դեմ): Ինչպես երևում է, Պետրոս կաթողիկոսը խստորեն պատժել է իր այդ հակառակորդին: Այս որոշումն ու նրա ի կատար ածված լինելը շափազանց շատ ուրախացրել են Գր. Մազիստրոսին. նա հազար ու մի ձևով արդարացնում, ոգևորում և փառաբանում է դրա համար Պետրոս կաթողիկոսին: «Վաղ ուրեմն ծանեար, ծայրագոյնդ զլուխ, զայսպիսւոյ հիւանդութիւն, և զխեղումն անդամոց և զանբուժելի առանց ամենայն հնարից հատեր սրով Հոգւոյն»: Նրա պատիժը տեղին է, որովհետև, — ասում է Գր. Մազիստրոսը, — ըստ սուրբ գրքի, «եթէ որ հայհոյէ զիշխան ժողովրդեան, մահու մեռանել», ապա առավել ևս նա, որ հայհոյել է «մակաւասար պետականութեան եկեղեցւոյ»: Իթե բիրիական Աքիտոփելը, Հուդան, Անանիան մահապատժի ենթարկվեցին մի-մի հանցանքի պատճառով, ապա «այս նոր նեռն», «որ այժմ լուծեալ կործանեցաւ», ավելի քան արժանի էր մահվան, որովհետև միանգամից բազմաթիվ հանցանքներ էր գործում: Ըստ Գր. Մազիստրոսի՝ այդ ներսեսը «Կործանեցաւ ոչ ի միոյ պատճառէ և ոչ յերկուց և ոչ յերից, այլ յոքունց»: Հայհոյանքի մի ամբողջ հեղեղ թափելով ներսեսի հասցեին, Գր. Մազիստրոսն ի վերջո ասում է. «Զի՞նչ արդեօք ասել պարտ է. ո՞րք զերծեալ ի գազանային դիմացն և յաղուեսու բարուցն և յօժի թիւնիցն և ի լեզուէն կատաղի շան, որ նախ առ աստուած ձգեաց զլեզուն, և պարսեաց զթոյնք իւր իբրև զարձան վիմի և զկնի ի փոխան իւր, և երրորդ յամենեսեան, որք ի Քրիստոս հաւատացեալ»: Այսինքն՝ այդ հայածված ներսեսը հայհոյել է աստծուն, Քրիստոսին և նրանց ներկայացուցչին երկրի վրա՝ կաթողիկոսին: Նա, ըստ Գր. Մազիստրոսի, համառորեն ձգտել է «ցրցտել զիրն ոտս տեառն և զնորայն հօտի», ուստի նա շատ ավելի խստագույն պատժի էր արժանի. սուրբ գիրքն էլ նրա նմանների մասին ավելի «կատաղի» պատիժներ է նախատեսել. «վասն որոյ բանս կատաղի զսա կամի անուանել և մակագրել յանուն կատաղւոյն ներսէսի»: Գր. Մազիստրոսը Աստվածաշնչից բազմաթիվ նորանոր փաստեր է բերում, ցույց տալու ինչպես աստծու, Քրիստոսի դեմ մաքառողները պիտի «գազանածախ սատակին»: Վերջապես նա հիշում է Քրիստոսի քարկոծությունը, որը մինչև իր օրերն էլ շարունակվել է. «և տակաին»

այժմ քարկոծի ի թշնամեաց խաչին: Եւ այս բազում. մի է և ներսէս յայնցանէ, որք կարծէին և ոչ պաշտէին»: Այսինքն՝ ներսեսն էլ Քրիստոսի քարկոծողներին մեկն է եղել, որին իրենք սխալմամբ կարծել են, թե հալատացյալ է: Անհուն ատելությամբ և զայրույթով Գր. Մագիստրոսը գրում է.

«Զի՛ք Պիղատոս... յաղթեաց Յիսուս... նեոն տատանի... զուր զօղանջեաց, կարկեսցի, լռեսցէ... հուր և ծծումբ, այս է բաժին բաժակի սորա... ոչ մոռասցի յեկեղեցուջ և այն իբրու զՅուզա... առաջնորդական իբրու զԱրիոս, զՄակեդոն, Սաբելիոս, Նեստորիոս, Եւտիքէս, և որ սոցա են համեմատ: Եւ հետեեալ և համաձայնեալ յիմաստանոց Եպիկուրոս և Միլթատոս: Սոկրատեան զբարտաղ, զի՛նչ արդեօք աստուածամարտդ բարբառիս յաստուածային զուլին. զի՛նչ մոլի յանդգնիս յանրիծ և յանարատ հոգի... ո՞րք յաշաղկոտացն և ի թշնամեացն յանդգնեալ կարաց բանալ զբերան, քա՞ղ հրաշունչ, քծնիդ աղուէս, յափշտակօղդ գայլ, պարարեալդ խոզ... խթան արջառ, զուարակ հարկանօղ, ուղտ ոխակալ, վրնջօղդ մոլի ի մատակս, գիշերայածու գազան, գերեզմանակրկիտ բորէ. որ ոչ, որք աշխարհի են մեռեալ, ի քոյդ մազաց և ի ժանեաց կարացին զերծանել. զի՛նչ բարբառիս. զերկուորի՞ս երդնուս պաշտել՝, ո՞ր գայս յանդգնեալ հրբէք՝ զաստուած մատնել, զսրովրէքն հայհոյել, մանավանդ եթէ զփոխան Յիսուսի. զի՛նչ կրեաց Սողոմ սակս հրեշտակացն՝ կրեա դու... պատառեսցի որովայնդ իբրու զԱրիոսին... հեղցի որովայնդ իբրու զՆեստորին... մի՛ ևս յիշեսցի անուն քո...»:

Այս բոլորից հասկանալի է, որ հանձին այս ներսեսի և նրա նախորդի մենք գործ ունենք զաղափարական այնպիսի մարտիկների հետ, որոնք պայքարել են աստծու, Քրիստոսի, եկեղեցու, հրեշտակների, քրիստոնեական հավատքի և, վերջապես, այդ բոլորի ներկայացուցչի՝ Պետրոս կաթողիկոսի դեմ: Հատկապես «աստվածամարտ» ու «կատաղի», «նեո» համարված ներսեսը, ըստ Գր. Մագիստրոսի նկարագրության, ներկայանում է որպես մի խիզախ թոնդրակեցի: Գր. Մագիստրոսը նրան հայհոյում է ավելի խիստ տոնով, քան որևէ թոնդրակեցու. դա ցույց է տալիս, որ այդ վտանգն ավելի քան մոտ ու անմիջական, աղետարեք ու շոշափելի է եղել նրա համար: Գր. Մագիստրոսի այդ տեղատարափ հայհոյանքները խոսում են նաև նրա ունեցած սարսափահար ապրումների մասին:

Եզրակացությունը պարզ է. թոնդրակյան շարժման հզոր շոշափուկներն են դրանք, որոնք, մեր կարծիքով, ավելի վաղ են երևան եկել Անիում, քան վերեփում նկարագրված ապստամբությունը:

Այսպիսով, տեսնում ենք, որ թոնդրակյան շարժումը թե՛ զաղափարական պայքարի և թե՛ ապստամբության ձևով, ներս է թափանցած եղել նաև միջնադարյան Հայաստանի այնպիսի խոշոր քաղաքի պարիսպներից, ինչպիսին էր Անին: Կնշանակի այդ շարժումն ընդգրկած է եղել ոչ միայն գյուղական,

¹ Ե. Սարգիսյանի «Ուսումնասիրութիւնք Մանիքէա-Պաղիկեան թոնդրակեցիների աղանդին» աշխատության մեջ (Վենետիկ, 1893, էջ 35) հանդիպում ենք այսպիսի վկայության. «Կալիսինիկէ անունով Մանիքեցի կին մի ծնաւ երկուորեակ օձեր, իժի նման կը սնուցաներ զանոնք թունաւոր վարդապետությամբ, որոց միոյ անունը Պօղոս էր, իսկ միւսին Յովհանն»: Այդ Պողոսին դիտում են որպես Պավլիկյանների հիմնադիր: Հավանաբար Գր. Մագիստրոսն այստեղ հենց այս երկվորյակներին է ակնարկում (Բ. Սարգիսյանն այդ վկայությունը վերցրել է Պետրոս Սիկիլեցուց):

այլև քաղաքային աշխատավորությունը՝ ընդդեմ ֆեոդալիզմի և նրա գաղափարական հենարան՝ քրիստոնեական եկեղեցու: Եվ դա միանգամայն բնական է, որովհետև, ինչպես նշվեց վերևում, դրա համար կային բոլոր նախադրյալները:

4

Անիում ծավալված թոնգրակյան շարժումը, բնականաբար, պիտի ուղղված լիներ ընդհանրապես տիրող կարգերի դեմ: Սակայն, ինչպես հայտնի է, այն ժամանակ տիրող կարգերի ներսում մթնոլորտը խիստ սրված էր: Կենտրոնական թագավորությունը տրոհված էր երկու թշնամական թևերի՝ Հովհաննես Սմբատ և Աշոտ թագավորների գլխավորությամբ: Բյուզանդական կայսրությունը, նվաճելով Վասպուրականի թագավորությունը, ձգտում էր օր առաջ մուտք գործել նաև Անի: Պետրոս կաթողիկոսը, Գր. Մագիստրոսը, Վեստ Սարգիսը նպատակ ունեին վերացնել Բագրատունյաց թագավորությունը և իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Նրանք իրենց նպատակն իրագործելու համար վճռական հարաբերությունների մեջ էին մտել բյուզանդական կայսրության հետ, որը, սակայն, առաջնորդվում էր լուկ իր շահերից ելնելով: Քաղաքական այս բարդ իրադրությունների մեջ, ժողովրդի աչքի առջև օրըստօրե ծավալվում էր Պետրոս կաթողիկոսի և նրա զինակիցների կործանարար գործունեությունը: Ամբողջ Հայաստանին սպառնում էր Վասպուրականի վիճակը: Պարզ է, որ այս կոնկրետ իրադրությունների մեջ աշխատավոր ժողովրդի և նրա հարազատ զավակների՝ թոնգրակեցիների պայքարը պիտի ամենից ուժեղ թափով ուղղված լիներ երկիրը բյուզանդական լծի տակ դնել ցանկացողների դեմ: Երա, իհարկե, չի նշանակում, թե այն ժամանակ միայն այս բնույթն է ունեցել թոնգրակյան շարժումը: Ո՛չ, նա այդուհանդերձ մնացել է որպես բոլոր տեսակ տիրողների անհաշտ և անողոք թշնամին: Բայց մենք այստեղ ցանկանում ենք կանգ առնել հատկապես թոնգրակյան պայքարի այն կողմի վրա, որը կապվում է Պետրոս կաթողիկոսի և մյուսների, ուստի նաև բյուզանդական նվաճողական քաղաքականության հետ: Այստեղ է թոնգրակյան շարժման կարևոր առանձնահատկություններից մեկը, որով այդ շարժումը երևալու է նաև հայրենի երկրի անկախության համար մղած իր ազնիվ պայքարով: Մեզ այդ հարցի վրա ծանրանալուն է մղում նաև այն հանգամանքը, որ Գր. Մագիստրոսի թղթերից երեկվան եկող նոր վկայությունները, ինչպես և հայտնի վկայությունների մի մասը, թոնգրակյան շարժումը կապում են հատկապես Պետրոս կաթողիկոսի, Գր. Մագիստրոսի և նրանց զինակիցների հետ:

Միամտություն կլիներ կարծել, թե Գր. Մագիստրոսը լուկ Պետրոս կաթողիկոսի անձնական շահերը պաշտպանելու նպատակով է այնպես կատաղի հարձակման անցել թոնգրակեցիների դեմ: Այդտեղ կան ընդհանուր շահեր. «յուսամբ առ աստուած, զի փրկեսցէ զմեզ հանդերձ մերով զարմիւ յայսպիսի դիւական և մոլեգնեալ հաղբից և խմորեալ զանգուածոյ Սաղուկեցոցն», — գրում է նա¹: Այդ «աստվածային» հուսադրության տակ նա նկատի է ունեցել բյուզանդացիների հետ կապված իրենց ծրագրերի իրագործումը: Իսկ, ինչպես հայտնի է, նրանք, այդ տեսակետից, իրենց նպատակին հասան. 1045

¹ Կ. Կոստանյուսնի, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 36:

թվականին բյուզանդացիները նվաճեցին ողջ Հայաստանը, և շատ շանցած, հենց Գր. Մագիստրոսի գլխավորությամբ, ճնշեցին թոնգրակյան շարժումը: Այդ ժամանակ Գր. Մագիստրոսն իր վերոհիշյալ «աստվածային» հուսադրման համաձայն գրեց. «Ողորմութիւնն աստուծոյ և աղօթք մերոյ Հուսաւորչին և նախահօրն ի ձեռն իմոյ նուաստութեան զայնպիսին քակտեաց արձան...»¹:

Հարց է առաջանում. արդյոք, հենց սկզբից Գր. Մագիստրոսը եղե՞լ է Պետրոս կաթողիկոսի զինակիցը: Այս հարցը դեռ չի քննված, բայց, ինչպես երևում է փաստերից, այո՛: Մինչև օրս իշխում է մի սխալ կարծիք, որի համաձայն այդ անձնավորությունները շեն դիտվում որպես նույն խմբի հիմնադիրներ և նույն նպատակների համար տարիներ շարունակ միասին պայքարած պարագլուխներ²:

Ինչպես հայտնի է, 1038 թվականին Պետրոս կաթողիկոսը, բյուզանդական կայսրության հետ ունեցած իր հակապետական բացարձակ գործողությունների պատճառով, բանտարկվում է: Նրան զետեղում են Բջնիի բերդում, որը Գր. Մագիստրոսի կալվածքն էր: Այստեղ նրանք գաղտնի նամակագրական կապեր են հաստատում միմյանց հետ: Այդ նամակներից մեկում Գր. Մագիստրոսը Պետրոս կաթողիկոսին գրում է.

«Եկն եհաս աւետաւորս տառ տարրական իմ նուիրաձիր իբրու զսիք զովացուցիչ և զտարաբ ի տապացեալ ժամանակս. և արծարծեալ վերստացայ զհոգի իմ ի դրանց դժոխոց»³:

Ինչո՞ւ է Գր. Մագիստրոսի համար ժամանակը տոթ ու տապացյալ, իսկ հոգին դժոխային պայմանների մեջ: Այդ հարցի պատասխանը գտնում ենք հաջորդ տողերում.

«Այլ քոյզ կապանս եռակի իմն հանդիպել... այսպիսի աղէտ տարակուսանաց ինձ ոչ եհաս երբէք որպէս այժմուս... մանաւանդ եթէ ես իսկ մի ի նոցունց մոլորեալ, զոր ի վերայ ուսոցդ դնել կարօտէի. զի ոչ ուղեգնացութեան էի զկնի այլոց օտարաձայնութեան. քանզի ի քեզ զբոլորն շարաբառնիլ հաւանէի, և զնաւապետդ կապեալ այժմ»⁴:

Այսինքն, քո բանտարկված լինելը ինձ համար եռակի ծանր է, այսպիսի աղետ ինձ երբեք չէր հասել, մանավանդ, որ ես մեկն եմ այն մոլոր մնացածներից, որոնք իրենց հույսը քեզ վրա էին դրել. ես այլոց հետևորդներից չեմ. իմ ծրագրերը քեզ հետ են կապված, և այժմ նավավարդ գտնվում է բանտում:

Այստեղից պարզ երևում է, որ Գր. Մագիստրոսը եղել է Պետրոս կաթողիկոսի գործակիցներից մեկը դեռևս 1038 թվականին, որից 7 տարի հետո միայն պիտի կատարվեր Անիի դավաճանական վաճառքը: Ավելին, այստեղ կան բոլոր հիմքերը ասելու, որ նրանց կապը ոչ թե 1038 թվականին էր սկսվել, այլ դրանից շատ առաջ:

Այս նամակի մեջ կան մի քանի ուրիշ ակնարկներ ևս, որոնք ավելի են բացահայտում իրերի մշուշված դրությունը: Ինչպես նշված է այդ նամակի խորագրում, Պետրոս կաթողիկոսին և Գր. Մագիստրոսին այդ ժամանակ հետաքրքրել է ամենից շատ Աշոտ թագավորի հարցը:

1 Կ. Կոստանյան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 65:

2 Տե՛ս Կ. Կոստանյանի կարծիքը նույն տեղում, էջ ԽԱ: Տե՛ս նաև Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, 11, Երևան, 1946, էջ 17—18 և այլն:

3 Կ. Կոստանյան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 13:

4 Նույն տեղում, էջ 14:

Նրանք անհուն ատելություններ են լցված եղել հատկապես Աշոտի և նրա աներոջ դեմ, որոնց և Գր. Մազիստրոսն այդ նամակում կատաղորեն հայհոյում է: Նա, նկատի առնելով Աշոտին, գրում է. «զարհուրեցուցիչ յարուցանել մրրկեալ ալիս», «զիա՞րդ համարձակիր ընդ վիմիդ հաստատուն», «արդ ինձ եղիցի զփորձ առնուլ... մանաւանդ վիժածին այն վատբարածին... մինչև ոչ անկցի ի վին ծծմբեայ, ոչ խաղաղասցի աշխարհ»...¹:

Պարզ է, որ նրանք ձգտել են Աշոտի մահվանը: Դժբախտաբար չի պահպանվել Պետրոս կաթողիկոսի նամակը՝ գրված գաղտնագրերի օգնությամբ, որի մեջ ակնարկված խնդիրների կատարման համար Գր. Մազիստրոսն իր կրքոտ պատրաստակամությունն է հայտնում. «այլ մեք ըստ հրամանի և ըստ գրոյ քո արասցուք զամենայն, ողջ լեր»²:

Պարզվում է, որ Բջնիի բերդն այնքան ապահով է եղել Պետրոս կաթողիկոսի համար, որ նա Գր. Մազիստրոսից բացի, նաև ուրիշներին էլ գաղտնի նամակներ գրել: Այդ նամակներից մեկը ճանապարհին հափշտակվել է. Պետրոս կաթողիկոսն այդ մասին ևս, որպես իր մտերմագույն զինակցի, դիմել է Գր. Մազիստրոսին: Վերջինս հանգստացնում է կաթողիկոսին, ասելով, որ իր տերիտորիայում նրա դեմ ոչ ոք չի համարձակվի թշնամաբար գործել: Ահա իր տողերը. «Այլ սակս թխտի քո յափշտակելոյ յուղոջ մի անկցի քեզ երկիւղ կասկածանաց, զի ոչ համարձակի ոք յիմմէ»³: Այդ գրությունն էլ ուղղված է եղել Աշոտ թագավորի դեմ:

Հիշենք ևս մի փաստ: Գր. Մազիստրոսի այդ գաղտնի նամակից երևում է, որ այդ ժամանակ նրանց ազդեցության տակ է գտնվել նաև Աշոտ թագավորի որդին՝ պատանի Գագիկը: Գր. Մազիստրոսի մի ուրիշ նամակից, որի խորագիրն է «Առ ուղիւն Աշոտի պատասխանի, մինչ զհօրէն իւր գրէր բանս կեղերջականս»⁴, նույնպես երևում է, որ Գագիկը գտնվելիս է եղել Գր. Մազիստրոսի և մյուսների ազդեցության տակ: Նրանք իրենց կուսակից վարդապետներից մեկին, գաղտնի ծրագրերով, ընդունել են տվել որպես Գագիկի դաստիարակ: Աշոտ թագավորը, սակայն, շուտով նկատել է այդ վարդապետի խարդախությունը և հալածել նրան: Գր. Մազիստրոսի և մյուսների նպատակն է եղել մոլորեցնել պատանի գահաժառանգին, լցնել նրան ատելությամբ՝ իր հոր դեմ և ծառայեցնել իրենց նպատակներին:

Այդպես էլ Գագիկը չի ազատվում նրանց նենգ ու խարդախ հաշիվներից, մինչև որ 1045 թվականին այդ խարդախությունը հասնում է իր գագաթնակետին:

Այսպիսով, տեսնում ենք, որ Պետրոս կաթողիկոսը և Գր. Մազիստրոսը ոչ թե պատահական մտերիմներ են եղել, այլ, որպես կենտրոնախույս կուսակցության պարագլուխներ, երկար տարիներ գաղտնի կապեր են ունեցել միմյանց հետ՝ փաստորեն ծառայելով բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականությանը: Եվ եթե նրանց դեմ այնքան կատաղի պայքար է ծավալվել թոնգրակեցիների կողմից, ապա հասկանալի է, որ դրա շարժառիթներից մեկն

¹ Կ. Կոստանյան, Գրիգոր Մազիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 14—15: (Ընդգծումները մերն են. Ա. Մ.)

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 208:

էլ բյուզանդական վտանգն է եղել: Ուստի այդ պայքարը միայն սոցիալական կոչել չի կարելի. այն, դրանից բացի, նաև հայրենասիրական պայքար է եղել՝ ընդդեմ բյուզանդական բռնակալության և նրա ստոր գործակալների:

5

Թոնդրակյան շարժման ուսումնասիրողներն այդ շարժումը, սովորաբար, քննում են ստատիկ վիճակում: Նրանք զանազան փաստեր են խմբում և մեկնաբանում, որ, իրոք, X—XI դարերում գործող թոնդրակյան շարժումը եղել է գյուղացիական մասսաների սոցիալական պայքարի դրսևորումը: Բայց թե ի՞նչ զարգացման է հասել այդ շարժումն իր դադափարական-քաղաքական էությունամբ, դա չի քննված: Բնականաբար հարց է առաջանում. մի՞թե իր գոյության 208 տարվա ընթացքում այդ շարժումը նույն որակն ունեւր, մի՞թե նրա վրա չէին ներգործում երկրի ներքին դրության հետ կապված զանազան կարևոր հարցերը:

Հենց այն հանգամանքը, որ թոնդրակյան շարժումն արդեն ընդգրկած է եղել նաև քաղաքային աշխատավոր մասսաների սոցիալական պայքարի հարցը, ինքնին խոսում է այդ պայքարի և ընդհանրապես թոնդրակյան շարժման նոր որակի մասին: Բացի դրանից, տեսանք նաև, որ այդ շարժումն արդեն հասած է եղել կաթողիկոսության ապարատին, այսինքն՝ ամբողջ եկեղեցու զլխավոր կենտրոնին: Դա ևս նվաճում է եղել թոնդրակյան շարժման համար, ուստի դա ևս խոսում է նրա զարգացման նոր աստիճանի հասած լինելու մասին: Փաստերը ցույց տվեցին, որ թոնդրակյան շարժումը միաժամանակ ուղղված է եղել երկրին սպառնացող նոր վտանգի՝ բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականության դեմ: Դա ևս խոսում է թոնդրակյան շարժման կենսունակության, նրա զարգացման և հետևապես ձեռք բերած նոր որակի մասին:

Ինքնին հասկանալի է, որ այդ շարժումն իր ծավալով և հզորությամբ նույնպես պիտի ավելի վիթխարի տեսք ու թափ ստացած լիներ: Սմբատ Զարեհավանցու հիմնադրած թոնդրակյան համայնքը, նրա խրախուսած պայքարի տարբեր օջախները XI դարի 20—50-ական թվականներին արդեն ընդգրկել էին համարյա ամբողջ Հայաստանը: Այս բոլորը ցույց են տալիս, որ, իրոք, թոնդրակյան շարժումը մի քարացած, իր դոգմատիկ օրենքներով գործող և նեղ մասշտաբներ ընդգրկող շարժում չի եղել: Նա հետզհետե աճել, հզորացել ու զարգացել է պատմական իրադարձությունների համաձայն: Այս զարգացման և հզորացման մասին ցայտուն վկայության ենք հանդիպում Գր. Մազիստրոսի մոտ: Ահա այդ տողերը. «ասա ինձ, ով սիրելի, զՄանիքեցւոցն որոյ Թոնդրակեցևացն, որ աւելի քան զերկերիւր ամ ապականեալ զաշխարհս ամենայն, արձանացուցին զայնպիսի ատրուշան իւրեանց վաւաշ մոլութեանն, և անհոգարարձ եղեալ հօտին Քրիստոսի և հովուաց և ի հովուապետաց, յարքայից և յիշխանաց և ի բոլոր գրեթէ ի մարդկանէ...»¹:

Այսինքն, երկու հարյուր տարուց ավելի գործող թոնդրակյան շարժումն ամբողջ երկրում այնպիսի արդյունքի հասավ, որ «Քրիստոսի հօտը», այսինքն՝ ժողովուրդը, դուրս եկավ հողևոր և աշխարհիկ ֆեոդալների հողաբարձության

¹ Վ. Կոստանյան, Գրիգոր Մազիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 65:

տակից: Խոսքն, իհարկե, չի վերաբերում նրանց բոլորի ֆիզիկապես և տնտեսապես ազատագրվելուն: Նա այդտեղ մասամբ նկատի ունի թոնդրական համայնքները, մասամբ էլ ամբողջ երկրով մեկ գործող սոցիալական տրամադրություններն ու ապստամբությունները:

Այս կարևոր վկայությունը միաժամանակ ցույց է տալիս Գր. Մագիստրոսի դժգոհությունը ոչ միայն թոնդրակեցիներից, այլև երկրի հոգևոր ու աշխարհիկ ղեկավարներից, որոնք չեն կարողացել արմատախիլ անել թոնդրական շարժումը:

Ուշագիշտ քննությունն այստեղ բացահայտում է մի նուրբ մոմենտ ևս. Գր. Մագիստրոսն այդ նամակով աշխատում է արդարացնել բյուզանդական իշխանության առկայությունը Հայաստանում: Սիրով է խոսում այդ տիրապետության բերած «բարիքների» մասին, առաջին հերթին նկատի ունենալով թոնդրակեցիների ճնշման փաստը: Նա, նույնիսկ, նկատի առնելով այդ հալածանքը, պահանջում է, որ Սարգիս Անեցին՝ իր (Գր. Մագիստրոսի) և բյուզանդացիների օգտին Անիում ագիտացիա ծավալի. «Նու դու այժմ փութացիս յայսոսիկ քոյով իմաստասիրական մակացութեամբ հրատարակել»¹:

Կնշանակի Գր. Մագիստրոսը և իր կուսակիցները կենտրոնական կառավարության նկատմամբ իրենց ունեցած դժգոհությունը ցանկացել են պատճառաբանել նաև նրանով, որ վերջինս չի կարողացել բնաջնջել թոնդրակեցիներին: Մի այլ նամակում, որը գրված է բյուզանդական բռնակալության տարիներին և ուղղված է Գագիկի դեմ, Գր. Մագիստրոսը Գագիկին սպառնում է՝ մատնացույց անելով հակաթոնդրական պայքարում նրա ունեցած անզորությունը: Նա նույնիսկ փորձում է դա ներկայացնել որպես դիտավորություն. «զօրութեամբն աստուծոյ ցուցից տեառնդ իմոյ, մինչև յե՞րբ ոչ հասեր ի վերայ խաբօղ սուտակասպասից և թշնամեացն աստուծոյ»²:

Իսկ իր մասին խոսելիս, այդ առիթով, նա միշտ հպարտանում է և գոհունակությամբ նշում, որ իրեն վիճակվեց ճնշել թոնդրակեցիներին:

Այս բոլորից մեզ համար պարզ է նաև մի ուրիշ բան. դա թոնդրակեցիների հզորացման նոր աստիճանի հասած լինելու փաստն է: Թոնդրակեցիների պայքարը տիրող կարգերի դեմ այնքան ծավալուն և ուժեղ է եղել, որ դա հիմք է տվել Գր. Մագիստրոսին բյուզանդական տիրակալության վերաբերյալ իր ագիտացիան հիմնել նաև թոնդրակեցիների հալածման փաստի վրա, որը կատարվեց բյուզանդացիների օգնությամբ: Ավելին, նա ամեն առիթ օգտագործում է, որ այդ հարցում նոր կառավարությունը հակադրի հնին՝ Բագրատունյաց թագավորությանը:

Որ վերջինս չի կարողացել բնաջնջել կամ արտաքսել թոնդրակեցիներին, դա փաստ է. և հենց այդ փաստն է մեզ համար կարևորը, որովհետև դա ցույց է տալիս թոնդրակեցիների ներկայացրած ահեղ ուժը: Նույնը կարելի է ասել նաև թոնդրակեցիներին կազմակերպված կերպով հալածելու հարցի մասին: Դա ևս իր ժամանակին խիստ հասունացած է եղել տիրողների համար: Կնշանակի այդ ժամանակ ավելի քան երեք մեծ է եղել նրանց ուժն ու վտանգը. որը նորից խոսում է այդ շարժման նոր որակի մասին:

Ինչ վերաբերում է կենտրոնական կառավարության մղած հակաթոնդրակ-

¹ Կ. Կոստանյան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 64—65:

² Նույն տեղում, էջ 212:

յան պայքարի անբավարար լինելուն, որից ղեկավարում է Գր. Մաղիստրոսը, ասպազայիտի կարծելի, թե կենտրոնական կառավարությունը, իրոք, չի պայքարել թոնդրակեցիների դեմ: Ընդհակառակը, այդ պայքարը սաստիկ բորբոքված է եղել, որը, սակայն, ի վիճակի չի եղել ճնշել թոնդրակեցիներին՝ վերջիններիս համընդհանուր տարածման և ուժեղացման պատճառով:

Թոնդրակյան շարժման ուսումնասիրության տեսակետից այս հանգամանքները մեծ նշանակություն ունեն, որովհետև ցույց են տալիս, թե այդ շարժումը որքան հզորացած ու վիթխարի ուժ էր հատկապես XI դարի 20—50-ական թվականներին: Դա ինքնին խոսում է նրա աճման և հզորացման, ուստի և նրա աշխատավոր մասսաների կենսական պահանջների հետ սերտորեն կապված լինելու մասին:

6

Թոնդրակյան շարժման ուսումնասիրությանը զբաղվողները մոռացության են մատնել ևս մի շատ կարևոր հարց: Դա վերաբերում է այդ շարժման բռնած զիրքին՝ 1045 թվականից Հայաստանի վրա տարածված բյուզանդական իշխանության նկատմամբ:

Վերևում մեջ բերված փաստերն արդեն ցույց տվին այս առումով կարևոր նշանակություն ունեցող որոշ հանգամանքներ: Թոնդրակեցիների պայքարը, հատկապես կենտրոնախույս ուժերի դեմ, ինքնարերարար խփում էր նաև բյուզանդական նվաճողական քաղաքականության հիմքերին: Ուստի հիմք կա ենթադրելու, որ թոնդրակյան շարժումը պիտի 1045 թվականից սկսած տոգորվեր՝ երկիրը այդ լծից ազատելու ուղով:

Ինչպես հայտնի է, 1045 թվականին Գր. Մաղիստրոսը բյուզանդական կայսրության կողմից նշանակվում է կուսակալ Միջագետքի և Տարոնի վրա: Մինչև նա կհասնի իրեն վստահված տերիտորիայի կենտրոնական մասերը, այնտեղ թոնդրակեցիները բորբոքում են մի կատաղի պայքար: «Եւ եկեալ ի Միջագետս, — գրում է Գր. Մաղիստրոսը, — հանդիպեցայ մահաբեր և մրրկեալ պղտորեալ վտակաց, որ հոսէր մահացու արտաթորեալ յանիժելոյն Ամբատայ որ ի Թոնդրակաց»¹: Մի ուրիշ նամակում ևս հանդիպում ենք նման տողերի. «Բի դալն իմում ի Միջագետս ո՞րպիսի շարութիւն սերմանեալ զորումն զոցա բարձի յաշխարհէ անտի»²: Իսկ, ինչպես հայտնի է, այդ Միջագետքը, որ ընկնում էր Երզնկայից հարավ, Անի (Կամախ)-ից մինչև Մովս լիճը, 1045 թվականից առաջ կազմում էր Հայաստանի և բյուզանդական պետական սահմանը: Ենթադրելի է, որ թոնդրակեցիների մրրկված և մահացու զործողությունները Հայաստանի պետական սահմանների վրա պիտի նպատակ ունենային նաև երկրի ազատագրումը՝ բյուզանդական լծից:

Բերենք մի ուրիշ վկայություն. Գր. Մաղիստրոսը, նկարագրելով թոնդրակեցիների հալածանքը, նշում է, թե ինչպես ինքը երկու մատնիչների ցուցմունքով Թոնդրակում գտնում է բազմաթիվ նամակներ՝ զբված Հայաստանի բոլոր զավառներից և ուղղված թոնդրակեցիների առաջնորդ Հեսուին՝ որպես բողոք տիրող կարգերի դեմ: Ահա այդ տողերը, որոնք մինչև օրս պատշաճ

¹ Վ. Կոստանյան, Գրիգոր Մաղիստրոսի թղթերը, Առաքանդրապոլ, 1910, էջ 167:

² Նույն տեղում, էջ 167:

ուշադրություն չեն արժանացել. «այնք քահանայք, որք եկեալ խոստովանեցան, որք մկրտեցան նախ, որ և անուանեցան մինն Պօղիկարայոս և միւսն Նիկանորա, նշանակեցին մեզ, եթէ յայնմ պղծանոցի խոճթին զթուղթսն առ անօրէն առաջնորդն Յեսուս, եկեալ յիրաքանչիւր դաւառաց. աղէ՛, ա՛ռ ընթերցիր և դտցես ի նոսա զաղճատանս ձունելոցն դիւականս: Եւ խուզեալ մեր գտեալ ընթերցաք լի շարաշար կախարդութեամբ և հայհոյութեամբ նաև յայդմ դաւառէ դմէնջ տրտունջ բարձեալ, և բազում շարութեան բանս»¹:

Եթե նախքան 1045 թվականն ուղղված նամակները պիտի կրեին հիմնականում սոցիալական բողոքի բնույթ, ապա դրանից հետո նրանք պիտի ունենային սոցիալ-քաղաքական բովանդակություն և ուղղված լինեին նաև բյուզանդական բռնակալության և նրա կամակատար մադիստրոսների դեմ: Հենց ինքը՝ Գր. Մադիստրոսը վկայում է, որ բողոքներ ու հայհոյանքներ են եղել նաև իր դեմ՝ դրված Միջագետքից, ուր նա բյուզանդական կուսակալի պաշտոն էր վարում:

Այս վկայությունն ունի նաև ուրիշ, կարևոր նշանակություն: Այստեղ, ինչպես ոչ մի տեղ, վկայվում է, որ Հայաստանի բոլոր («իրաքանչիւր») գավառների աշխատավորությունը կապ է ունեցել թոնդրակեցիների ղեկավար Հեսուսի հետ: Իրենց բողոքների և դժգոհությունների կապակցությամբ նրանք զիմել են Հեսուսին՝ ոչ թե լուր տեղյակ պահելու համար, այլ խորհուրդներ և հրահանգներ ստանալու նպատակով: Ուստի անհիմն պիտի համարել այն տպավորությունը, որի համաձայն թոնդրակյան շարժումը զարգացել է իբր թե իրարից անկախ օջախների ձևով, անջատ-անջատ: Խոսքն, անշուշտ, չի վերաբերում ապստամբություններին, որոնք, հիմնականում, ծագել ու մարել են մեկը մյուսից անկախ: Խոսքն այդ բողոքի հիմքում ընկած զաղափարական շարժման, թոնդրակեցիների ուսմունքի, նրանց ձգտումների, ինչպես և այդ անջատ-անջատ երևան եկող ապստամբություններից շատերի կազմակերպման մասին է: Այսպես, ի՞նչպես կարող էր այդ շարժումն ընդգրկել ամբողջ (կամ համարյա ամբողջ) երկիրը և տևել ավելի քան երկու հարյուր տարի: Թոնդրակյան շարժման էությունը պահանջում էր, որ այն տարածվեր ամբողջ Հայաստանում: Եվ ոչ միայն Հայաստանում: Այդ շարժման ուժը և երկրի դրությունը պայմանավորում էին նման երևույթի հնարավորությունը: Ուրեմն, ի՞նչը պիտի խանգարեր դրան: Գուցե այստեղ մատնացույց արվեն աշխարհագրական ֆակտորը, տեխնիկական պատճառները և այլն: Ե՛րայց ինչպե՞ս էր, որ նույն պայմաններում հողևոր հայրերը, կաթողիկոսությունը, թագավորները, ֆեոդալները և այլն կարողանում էին կապ պահպանել երկրի բոլոր ծայրամասերի հետ: Զպիտի մոտանալ, որ թոնդրակեցիներն ավելի ևս հնարավորություն ունեին այդպիսի կապ ստեղծելու, որովհետև նրանց օգնում էր և՛ դյուղի, և՛ քաղաքի աշխատավորությունը:

Այդ կապը վկայված է նաև մեջ բերված այն տողերում, որտեղ Գր. Մադիստրոսը, խոսելով Միջագետքի թոնդրակյան խռովությունների մասին, անմիջապես ընդգծում է, որ այդ «պղտոր» վտակները հոսում էին Թոնդրակից, Մմրատ Ջարեհավանցու հիմնած աղբյուրից: Ուստի, ասում է նա, «Եւ մաքրեալ զայնոսիկ, խաղացի շու արարեալ մինչև յակն, յորում բունեալ էր իժն և բարբն և վիշապն շարութեան», այսինքն՝ մինչև Թոնդրակ²:

¹ Կ. Կոստանյան, Գրիգոր Մադիստրոսի թղթերը, Ազգաբանագրագույն, 1910, էջ 163:

² Նույն տեղում, էջ 167:

Այս տողերը մի կողմից խոսում են այն մասին, թե ինչպես թոնդրական շարժումը, հատկապես իր վերջին տարիներին, գործել է կենդանի կապի և ղեկավարման միջոցով, իսկ մյուս կողմից՝ ցույց են տալիս, որ 1045 թվականից հետո թոնդրակեցիների պայքարը ուղղված է եղել նաև բյուզանդական բռնակալության ու նրա գործակալների դեմ:

Այս առումով ուշագրավ է նաև Գր. Մազիստրոսի մի ուրիշ նամակը՝ ուղղված «Առ հայրն սրբոյ Կարապետին»¹: Այդ նամակը գրելու առիթը հանդիսացել է Մուշում տեղի ունեցած մի խռովություն, որը նույնպես կապվում է թոնդրակեցիների հետ: Գր. Մազիստրոսն այստեղ էլ խոսում է հունական դիցաբանության և ճոռոմաբանության միջոցով: Միտքը, սակայն, պարզ է: Մուշում բռնկված խռովության լուրն առնելով, ինքը շարժվում է դեպի այնտեղ: Ինչպես հունական դիցաբանությունից մեջ բերված օրինակում, — գրում է նա, — «Այսաբար բողն այն Ափոդդիտէս փրփրածին հանդերձ արբն Պիսիդոնիւ առ մեզ ի դաշտիս Մամիկոնեան ներգործեաց. որ և ապականեաց վաւաշ բորբորիտոն գիջամուլի պոռնիկն, և ոչ կարացաք հասանել... հազիւ հազ ի տոշորեալս հասաք խանձառ»: Կիսաճանապարհից գրված այս տողերով Գր. Մազիստրոսը հուսադրում է ս. Կարապետի վանահորը և սպառնում այնտեղ խռովություն բարձրացնող «ափրոդդիտեականներին» հետևյալ ձևով. «բայց վաղիւն, թէ կամեսցի տէր, առ ձեզ ժամանեմք ըստ այնմ, եթէ անօրէնք իբրև զծով ծփեսցին և հանգիստ մի՛ գտցեն»: Այսինքն, ես վաղն այնտեղ կլինեմ, և այդ անաստվածները ծովի նման կալեկոծվեն և հանգիստ չեն գտնի:

Պարզ է, որ բյուզանդական տերիտորիայում բռնկված այս մրրկումն էլ ուղղված է եղել ոչ միայն հայ եկեղեցու, այլև բյուզանդական պետության և նրա հետ դաշնակցած ներքին տերերի դեմ:

Հասկանալի է, որ թոնդրակեցիները, որպիսի աշխատավոր ժողովրդի առաջավոր ներկայացուցիչներ և նրանց շահերի պաշտպաններ, պայքարել են նաև հանուն երկրի ազատագրման: Ի՞նչ հենց այդ պատճառով է, որ բյուզանդական կայսրությունը Գր. Մազիստրոսին հատուկ զորք ու հնարավորություն էր տալիս, որպեսզի նա հալածեր թոնդրակեցիներին: Գր. Մազիստրոսն իր այդ գործողությամբ կտրում էր Հայաստանի անկախության համար բարձրացող ամենահզոր և ամենաազնիվ բազուկները, է՛լ ավելի ամրացնելով բյուզանդական բռնակալության կապանքները:

Թե որքան մեծ է եղել ժողովրդական ապստամբության վտանգը բյուզանդիայի դեմ, դա երևում է նաև թոնդրակեցիներին «հումանիստորեն» հալածելու այն մեթոդից, որով Գր. Մազիստրոսը սիրում էր ներկայանալ իր նամակագիրներին: Այդ «անարյուն» հալածանքը խոսում է ոչ թե Գր. Մազիստրոսի «բարի» սրտի և «ազնիվ» հոգու մասին, այլ, ամենից առաջ, բյուզանդական այն խորամանկ քաղաքականության, որը նպատակ ուներ կանխել իր դեմ բարձրացող ժողովրդական հուզումը: Անշուշտ, այդ հուզումը կբորբոքվեր և կվերածվեր ահեղ հրդեհի, եթե նրանք թոնդրակեցիների նկատմամբ դիմեին արյունահեղ միջոցառումների: Նրանք այդպես երկրից հեռացնում էին նաև տեղական ազատանիին՝ իր զինվորական ուժերով և բնակչության որոշ մասով:

¹ Կ. Կոստանյան, Գրիգոր Մազիստրոսի թղթերը, Աղբյուրագրապուլ, 1910, էջ 69:

Թոնդրակեցիների պայքարը բյուզանդական կայսրության և նրա գործակալների դեմ չի դադարում անգամ այն դաժան հալածանքից հետո, որ կազմակերպեց Գր. Մազիստրոսը՝ կայսրության զորքերի միջոցով: Այս տեսակետից ուշադրավ են այն փաստերը, որոնք ցույց են տալիս թոնդրակյան շարժման որոշ ղեկավարների վերևում նշված հալածանքից փրկված լինելը և նրանց կազմակերպած պայքարը՝ նոր իրադրությունների մեջ: Այդ մասին ևս Գր. Մազիստրոսի նամակներում կարևոր փաստեր կան: Երանի թե կարողանայինք ազատվել «ի մահացու թիւնից ձերոց և ի դադտնի նետից և ի Սաղուկեցի խմորոց և յասրապղեաց դայլոցդ, ննչէաք արդեօք խաղաղական»¹: Այսպես է գրում Գր. Մազիստրոսը նրանց ուղղված մի նամակում՝ հանգիստ ու խաղաղ քուն երազելով: Հասկանալի է, որ այս համառ ու կատաղի պայքարն ուղղված էր ոչ թե միայն Գր. Մազիստրոսի, այլև բյուզանդական տիրապետության դեմ, որովհետև Գր. Մազիստրոսն այդ տիրապետության պաշտպաններից և պետական ակտիվ գործիչներից մեկն էր: Նրա դեմ բողոքում էին ոչ թե նրա անձնական հատկությունների, այլ պետական-հասարակական գործունեության պատճառով:

Որ թոնդրակեցիների պայքարը, անգամ նրանց հիմնական մասի արտաքսումից հետո էլ, ուղղված է եղել նաև բյուզանդական բռնակալության դեմ, այդ մասին վկայում է ինքը՝ Գր. Մազիստրոսը, ասորական կաթողիկոսին գրած նամակում: Այդ նամակն ամբողջապես ուղղված է թոնդրակեցիների դեմ. Գր. Մազիստրոսը հայհոյում է նրանց և ձգտում արդարացնել իր կատարած հալածանքը: Այնուհետև նա կոչ է անում ասորոց կաթողիկոսին, որպեսզի նա էլ սկսի հալածել իր հովանավորած տերիտորիայում գտնվող թոնդրակեցիներին: Հետո նա փառաբանում է բյուզանդական տիրապետությունը, ակնարկում ասորիքի հետ կապված հաշիվներում՝ միջամտել կայսրության առաջ և հայհոյում այդ կարգերի թշնամիներին: «Այլ մեք, ըստ հայցման քո սրբազնութեան, հայցեսցուք ի մերոյ քրիստոսապսակեալ, սուրբ ինքնակալ և տիեզերակալ բարեփառ արքայէն յոյժ թախանձանօք և մաղթանօք, զի թերևս վերստին արծարծիցի քոյն առաջնորդական պետութեան կառողութենէ... Եւ պարտ է քեզ աղօթս սրբազանս և խորհրդականս կատարել վասն մերոյ սուրբ արքային, զի թշնամիս թագաւորութեան նորա արասցէ տէր ընդ ոտիք նորա նկուն...»²:

Պարզ է, որ տվյալ նամակում, որպես ընդհանուր թշնամու՝ իր և Բյուզանդիայի դեմ, նա, ամենից առաջ, նկատի ունենում էր թոնդրակեցիներին, որոնց էլ նվիրված է իր այդ նամակը:

Այստեղ, ի միջի այլոց, տեսնում ենք նաև Գր. Մազիստրոսի այն խորամանկությունը, որով նա մի դեպքում երևան է գալիս որպես ոչ-բյուզանդասեր³,

¹ Ա. Աոսանյան, Գրիգոր Մազիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 166:

² Նույն տեղում, էջ 152:

³ Այս կառուցվածքով հիշենք Գր. Մազիստրոսի նամակը՝ Սանահինի միաբաններին, որտեղ նա, զրպարտելով Գաղիկին, գրում է, թե, իբր, Գաղիկն իր կամքով «ի Յոյնս չոքաւ ինքն» և զլուխ բերեց իր հորեղբոր կտակը, որով երկիրը «տուեալ էր ի Յոյնս». ես էլ ստիպված էի ենթարկվել հույներին, որովհետև «ոչ այլ ուրեք գտեալ իմ հնար կամ ապաստան» (Նույն տեղում, էջ 140):

խակ մյուս դեպքում (ինչպես այստեղ)՝ որպես բյուզանդական կայսրության երկրպագու Այդպիսին է եղել նա իր ամբողջ քաղաքական հաշիվներում:

Բերենք մի ուրիշ փաստ:

Հալածանքից մասամբ փրկված, բայց համառորեն իրենց պայքարը շարունակող թոնդրակեցիներին ուղղված նամակի մեջ Գր. Մագիստրոսը գրում է.

«Բայց պատուիրեմ ձեզ, թոյլ տուք մեզ և աշխարհին մեր Միջագետաց և ամենայն որք ընդ իշխանութեամբ Հոռոմոց սուրբ թագաւորութեան. մի՛ թղթովք և մի՛ պատուիրելով զշար հերձուած ձեր ուսուցանէք կամ հաստատէք. և ահա արիւն այնոցիկ և ձերն ի գլուխ ձեր...»¹

Ահա թե որքան բացահայտ կերպով է ցույց տրված թոնդրակեցիների ներկայացրած վտանգը բյուզանդական կայսրության դեմ:

Թոնդրակեցիները, որպես սոցիալական պայքարի դրոշակակիրներ, բյուզանդացիների և նրանց գործակալների դեմ պայքարել են ոչ թե լոկ որպես օտար բռնակալների, այլ նաև որպես դասակարգային հակառակորդների: Այս նոր պայմաններում արդեն սոցիալական և հայրենասիրական պայքարները միաձուլված են եղել:

Այլ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև բյուզանդական կայսրությունն իր պետական ապարատով ներկայացնում էր ոչ թե որպես լոկ օտար բռնակալ, այլև միաժամանակ՝ ճնշող դասակարգ²: Պայքարել այդպիսի կարգերի դեմ, նշանակում էր մղել միանգամից և՛ սոցիալական, և՛ ազատագրական-հայրենասիրական պայքար: Ավելին. այստեղ կար մի ուրիշ հարց ևս: Թոնդրակեցիների պայքարն այս պայմաններում ընդունում էր առավել լայն սահմաններ, շփվելով նաև բյուզանդական լծի տակ գտնվող ուրիշ ժողովուրդների շահերի հետ: Թոնդրակեցիներին սիրով պիտի հարեին նաև հույն աշխատավորները: Այսպիսին էր բնական հետևանքը:

Այս առումով ուշագրավ է նաև թոնդրակեցիների առկայությունը Ասորական Միջադեպում, որտեղի կաթողիկոսին դիմելով, Գր. Մագիստրոսը պահանջում է միասնական ճակատ կազմել թոնդրակեցիների դեմ. «պարտ էր ուրեմն յաստուածուստ արժանանալ քեզ այսպիսի մրցանաց և մարտի (Գր. Մագիստրոսը նկատի ունի իր մղած կռիվը թոնդրակեցիների դեմ), զի ճակատիցիս և դու զկնի այլոց հարցն սրբոց քում նախնեացն ընդդէմ աստուածամարտն սրոց աղանդաւոր դիւթիւթեան կիւսոյ գաղտագող բաղբաղանաց այսպիսեաց ընդ դրուանաւ խաւարային նսեմացեալ ազգիդ»³:

¹ Կ. Կոստանյան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 167—168:

² Այս տեսակետից ուշագրավ է, օրինակ, Գր. Մագիստրոսի «Պատասխանի քրոյն Գազկայ ուրոյն Առոսոյ, եկեալ վասն ոչինչ իւրաց վայրապար զկնի կրօնաւորաց սակս պարտուց ինչ նոցա ի գաւառէն Տարօնոյ» նամակը: Երևում է, որ բազմաթիվ դիմումներ են ուղարկվել Գազիկին՝ Գր. Մագիստրոսի ապօրինի դործողությունների և շարաշահումների մասին: Գազիկը այդ բոլորին գումարել է նաև Գր. Մագիստրոսի այլ վատ գործերը և բողոք բարձրացրել նրա դեմ: Գր. Մագիստրոսը, կեղծ քրիստոնեական վարագուրումներով, ցանկանում է նախ արդարանալ. «ոչ է ինձ մեղս, եթէ հարստահարեցից. այո, մեղս համարիմ»: Այսինքն, ինքը ուրիշներին չի հարստահարում, որովհետև դա մեղք է: Այնուհետև, ակնարկելով իր «նորադոյնք» և «անտիական» թշնամիներին, ասում է. «մինչև յերբ զկնի իմ ձգեն դքեզ ախտացիալ հակաճառել զրով և առաջի արքայի ալաւստանել և ի լերինս զրել առ կրօնաւորս հակաճառութիւն, և դմարդիկս ժողովել, այպանել, հայնոյն» (նույն տեղում, էջ 211—213):

³ Կ. Կոստանյան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 132:

Յհա թե ինչ վիթխարի պայքար է, որ գլխավորել են թոնդրակեցիները. և հենց այդ պատճառով է, որ այնքան կատաղի միջոցների են դիմել նրանց նկատմամբ բյուզանդական կայսրությունն ու նրա գործակալները:

Անկախ այդ միջոցառումներից, նշված պայքարը համառորեն շարունակվել է: Եվ Գր. Մագիստրոսը, որ այնքան սիրով էր լծվել կայսրության կառքին, ի վերջո խոստովանում է, որ ինքն այլևս չի կարող դիմանալ. «երթամբ առ արքայ, դի թերևս դերժեալք ի մրրկեալ այսմ բղեշխութենէ»¹:

Օրինակները բավական են: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ թոնդրակեցիների շարժումը սերտորեն կապված է եղել նաև երկրի քաղաքական իրադարձությունների հետ: Այդ մոմենտը թոնդրակյան շարժման ամենակարևոր մոմենտներից մեկն է:

Ամփոփենք:

Մեր որոնումները թոնդրակյան շարժման մասին՝ կատարված միայն Գր. Մագիստրոսի վաղուց հրատարակված նամակների հիման վրա, ցույց են տալիս, թե որքան պակասավոր են մեր մինչև օրս ունեցած գիտելիքներն այդ շարժման վերաբերյալ: Եղած համապատասխան ուսումնասիրությունների մեջ փաստարկված ու սրված է այդ շարժման միայն մի բնորոշ կողմը. այսինքն, ցույց է տրված, թե ինչպես թոնդրակյան շարժումը գլխավորել է գյուղացիական աշխատավորության սոցիալական պայքարը: Սակայն, դրանից բացի, թոնդրակյան շարժումն ունեցել է նաև այլ, խիստ կարևոր կողմեր էլ, որոնք առաջին անգամ բացահայտվում և փաստարկվում են ներկա ուսումնասիրության մեջ:

Գր. Մագիստրոսի նամակներում գտնում ենք վկայություններ այն մասին, թե ինչպես թոնդրակյան շարժումը, զարգանալով, ընդգրկել է նաև քաղաքային աշխատավոր մասսաներին: Դրա փայլուն ապացույցը Անիում երևան եկած թոնդրակյան գործիչները և ապա նրանց կազմակերպած խոշոր ապստամբությունն է՝ ուղղված Պետրոս կաթողիկոսի դեմ:

Պարզվում է, որ թոնդրակյան շարժումն այդպիսով թևակոխել էր նաև մի ուրիշ բնադավառ: Հարվածելով Պետրոս կաթողիկոսին, Գր. Մագիստրոսին և նրանց մյուս համախոհներին, այդ շարժումը փաստորեն կրակի տակ էր վերցրել այն ժամանակվա հայ իրականության համար խիստ վնասակար նշանակություն ունեցող մի քաղաքական խմբի: Դա մի խումբ էր, որը նպատակ էր դրել Բագրատունյաց թագավորության խորտակումը, թոնդրակյան շարժման ճնշումը և երկրում իրենց իշխանության հաստատումը՝ բյուզանդական կայսրության օգնությամբ:

Հատկապես Պետրոս կաթողիկոսի և Գր. Մագիստրոսի երկարատև, դադունի և խորամանկ քաղաքականության շնորհիվ, այդ խումբը իրագործում է իր դավաճանական ծրագիրը՝ բացի մի կետից՝ երկրում իրենց համար իշխանություն ձեռք բերելու իրավունքից: Բյուզանդական իշխանությունը նրանց օգտագործում է որպես գործիք՝ իր նվաճողական նպատակներն իրականացնելու: Այդ դեպքից հետո (1045 թ.) հատկապես Գր. Մագիստրոսն անփոխարինելի դործիչ է դառնում կայսրության համար:

¹ Կ. Կոստանյան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 48:

Այս նոր իրադրությունների մեջ նոր որակ է ստանում նաև թոնդրակյան շարժումը: Նրա ջանքերն ուղղվում են հայրենիքն ազատագրելու նպատակին: Ակսվում է մի համառ ու կատաղի կռիվ, որի մեջ առկայծում են թե՛ սոցիալական և թե՛ ազատագրական պայքարի կրակները: Բյուզանդական կայսրությունը, տեսնելով իր դեմ ծառայող այդ հզոր վտանգը, Գր. Մագիստրոսին իրավունք և ռազմական զինված ուժեր է տրամադրում՝ այն դաժանորեն ճնշելու: Տեղահանվում են թոնդրակյան շարժման հետ կապված գլխավոր ուժերը, իսկ նրանց բնակավայրերը մատնվում հրկիզման:

Թոնդրակյան շարժումը, սակայն, այնքան խոր արմատներ ունեւ ժողովրդի մեջ, որ այդ միջոցառումն էլ բավական չի լինում նրան բնաջնջելու համար: Հանդես են գալիս թոնդրակյան շարժման նոր առաջնորդներ և համառորեն շարունակում ղեկավարել պայքարը: Այդ ճնշման տակ Գր. Մագիստրոսը ոչ միայն հանգիստ քուն է երազում, այլև ձգտում ազատվել մրրիկների վրա հանգչող իր բղեշխությունից:

Այսպիսով, տեսնում ենք, որ թոնդրակյան շարժումը եղել է ոչ միայն գյուղի, այլև քաղաքի աշխատավորության սոցիալական պայքարի կազմակերպողն ու առաջնորդը: Տեսնում ենք նաև, որ այդ շարժումն ուղղված է եղել ոչ միայն ներքին, այլև արտաքին տերերի դեմ՝ առաջնորդելով աշխատավոր ժողովրդի սոցիալ-հայրենասիրական պայքարը՝ բյուզանդական բռնակալության և նրա կամակատարների դեմ:

Այս երևույթն ինքնին բացահայտում է թոնդրակյան շարժման կյանքի ներքին օրինաչափությունները: Նա, իր երկու հարյուր տարվա գոյության ընթացքում, միշտ աճել, զարգացել և հզորացել է: Այն չի ունեցել քարացած տեսք, չի սահմանափակվել լոկ այն պայքարով, որի համար ծնվել է սկզբում: Որպես աշխատավոր ու զրկված մարդկանց շահերի պաշտպան, թոնդրակյան շարժումը թափանցել է բոլոր այն վայրերն ու բնագավառները, որտեղ սրված են եղել դասակարգային հակասությունները, որտեղ տուժել են աշխատավորության շահերը:

Թոնդրակյան շարժումը միջնադարյան հայ աշխատավորության կյանքի ու պայքարի ամենահոյակապ դրվագներից մեկն է: Որքան էլ քիչ ու թշնամական են նրա մասին պահպանված վկայությունները, բայց և այնպես նրանց մեջ առկա են այդ շարժման զանազան պարագաները, որոնց մանրակրկիտ ուսումնասիրությունը դեռ շատ նորություններ կհայտնի մեզ այդ վիթխարի շարժման մասին: